ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 ապրիլի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

47
(2897)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՔԱՎՈՐԸ ԳՈՐԾՈՒՂՎԵԼ Է ՊՈՒՏԻՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, մի կողմից, քննադատում է ռուսներին, ակնհայտ հակառուսական քայլեր իրականացնում, մյուս կողմից՝ քավորին, ՔՊ խմբակցությունից եւս 2 հոգու, որպես դիտորդ, ուղարկում է ՌԴ նախագահական ընտրությունները դիտարկելու: Ավելին՝ նրանք տվել են դրական եզրակացություն՝ ՌԴ նախագահական ընտրությունների թափանցիկության, արդարության եւ օրինականության վերաբերյալ:

Այսպիսով, մարտի 15-ին, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կարգադրությամբ, երկկողմ փոխհարաբերությունների բերումով ՌԴ նախագահական ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու համար 2024 թվականի մարտի 14-18-ը Մոսկվա են գործուղվել Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վահե Ղալումյանը եւ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Գեւորգյանը: Դրանից բացի, ԱՊՀ միջխորհրդարանական համագործակցության ձեւաչափով դարձյալ Մոսկվա են գործուղվել ՔՊ անդամ երկու պատգամավորներ Ալեքսանդր Սանդիկովը եւ Միքայել Թումասյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջիններս նաեւ միասնական եզրակացություն են ստորագրել, համաձայն որի՝

ՌԴ նախագահի ընտրություններն անցել են ազատ, արդար եւ թափանցիկ: Ասել է թե՝ Պուտինը լեգիտիմ նախագահ է: Եզրակացությունը կհրապարակվի առաջիկայում:

«Ժողովուրդ» օրաթերթը Նիկոլ Փաշինյանի քավոր, ՔՊ-ական Վահե Ղալումյանից փորձեց պարզել՝արդյոք ինքն անձամբ այնտեղ Պուտինի ընտրության մշտադիտարկման աշխատանքներին մասնակցել է. եթե այո, ինչ-որ խախտումներ արձանագրել է արդյոք: ՔՊ-ականն իրեն հատուկ ոճով հարցը լսելիս անջատեց ու այլեւս չպատասխանեց մեր հեռախոսազանգերին:

Որպես ամփոփում թերեւս արձանագրենք, որ Նիկոլ Փաշինյանի քաղաքական անկայունությունը դրսեւորվում է նաեւ ամենասուր պահերին: Մի կողմից՝ ՌԴ-ի դեմ արշավներ է անում, մյուս կողմից՝ իր միջազգային գործընկերների պատկերացումներին տրամագծորեն հակառակ քայլեր է անում:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնավարմանը մնացել է 730 օր՝ գրեթե 2 տարի, եթե չոր հաշվարկ անենք: Այս տարիների ընթացքում նախկինների կողմից արմատացած մոլությունները մերժող այսօրվա իշխանությունները ստեղծեցին նոր պաշտամունքներ՝ թեժացնելով աթոռապաշտությունն ու անձի պաշտամունքի գաղափարը: Նրանք, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, կախված են սեփական աթոռից, իսկ հեռանալու վտանգը, հաշվարկված օրերի համաձայն, դամոկլյան սրերի պես կախված է նրանց գլխին: Անհայտ է, թե վերջին տարիներին Արցախի 11.458 կմԱ տարածքը հանձնած եւ ՀՀ սուվերեն որոշ տարածքների նկատմամբ ակնհայտ հակահայ նպատակներ հետապնդող ՀՀ վարչապետը ինչպես է պատրաստվում հուսալ, որ կարժանանա ժողովրդի վստահության քվեին: Անգամ «Գելլափ»-ի հարցումները, ամերիկյան կազմակերպությունների հարցումները հրապարակավ վկայում են, որ հաջորդ ընտրություններում Նիկոլ Փաշինյանը այսօրվա միահեծան կառավարման համակարգը չի ունենալու, եթե չասենք, որ Սահակաշվիլու նման նրան կմերժի ժողովուրդը. Փաշինյանի այսօրվա կարգավիճակին մնացել է 730 օր:



Առաջիկայում ՔՊ-ն կհանդիպի ՍԴ դատավորի թեկնածուի հետ: Մեզ հայտնի դարձավ, որ ՔՊ-ականները դրական են տրամադրված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբոր՝Դավիթ Խաչատուրյանի հետ հանդիպմանը եւ, ինչպես ներքին խոսակցություններում ասել, արդեն նրան մեկ անգամ լսել են ու քվեարկել, որ նա Վճռաբեկ դատարանի դատավոր դառնա, ուստի այս անգամ էլ որոշումը դրական կլինի: Ըստ էության, ՔՊ-ականները Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին հաճոյանալու համար կքվեարկեն նրա եղբոր օգտին հնարավոր քրեական պատասխանատվությունից իրենց ապահովագրելու համար: Երեկ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հայտարարություն էր տարածել Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջարկելու մասին: «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղում ընտրելու համար առաջարկել է Դավիթ Խաչատուրյանի թեկնածությունը»,- ասվում է հայտարարության մեջ: Նկատենք,որ Դավիթ Խաչատուրյանին առաջին անգամ դատավորները մերժեցին, եւ նրա փոխարեն ԱԺ գնաց Դավիթ Բալայանը, սակայն ՔՊ-ն մերժեց նրան: Արդյունքում դատավորները երկրորդ անգամ հավաքվեցին եւ, ըստ էության, ճնշումների արդյունքում քվեարկեցին Սասուն Խաչատրյանի եղբոր օգտին, ու նա կգնա ԱԺ՝ ներկայանալու ՔՊ-ի դատին:

ArmLur.am-ի ապրիլմեկյան կատակների շարքը, հերիք չէ, իշխանականների վերնախավը սրտին շատ մոտիկ ընդունեց, հիմա էլ այդ կատակներից մեկը կարծես աստիճանաբար ճշմարտություն է դառնում: Խոսքն «Ակադեմիական քաղաք» նախագծի մասին է: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը մոտ կանգնած՝«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները հայտնում են, որ Նիկոլ Փաշինյանը կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի հետ լուրջ քննարկում է ունեցել, որի հիմնական թեման «Ակադեմիական քաղաք» նախագիծն է եղել: Փաշինյանը կարծիք է հայտնել, որ նախագիծը դժվար իրագործելի է, դժգոհություններ է հարուցել, եւ դժվար թե մինչեւ 2030 թվականն այն իրականանա: ՀՀ վարչապետի խոսակցությունը գնացել է նախագծի չեղարկման ուղղությամբ: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ԿԳՄՍ նախարարության մամուլի քարտուղարին, որը մեզ հետ զրույցում ասաց հետեւյալը՝«Ակադեմիական քաղաք» նախագիծը սահմանված ընթացակարգով առաջ է գնում եւ սահմանված կարգով իրականացվում է: Առաջիկայում սպասվում է «Ակադեմիական քաղաք» նախագծի հանրայնացում, որին կհրավիրվեն նաեւ ՁԼՄ ներկայացուցիչները»: Նախարարությունը պնդում է, որ հստակ որոշում ունի՝ամեն գնով իրագործել «Ակադեմիական քաղաք» նախագիծը, սակայն մինչ օրս բարձրագույն ուսումնական հաստատություններից՝ եւ պետական, եւ մասնավոր, հստակ համաձայնություն ու կարծիք չեն ստացել: Հիշեցնենք, որ բուհերը ինքնավար մարմիններ են եւ, ըստ օրենսդրության, անկախ են:

ԶՐՈՒՅՑ

«ՄՏԱԾՈՒՄ ԵՔ՝ ՆՈՐ ՄԻ ՔԱՐՏԵԶ ՉԵ՞Ն ՀՈՐԻՆԵԼՈՒ»

Ամ «Պասիվ ունեմ» խմբակցության դատգամավոր Աննա Մկրտչյանը խոսել է Տավուշի շուրջ տեղի ունեցող զարգացումներից, սահմանազատման գործընթացից եւ ընդդիմության անելիքներից:



-Տիկին Մկրտչյան, Տավուշի շուրջ նոր զարգացումներ են գնում, իշխանության ներկայացուցիչները չեն հերքում, որ այնտեղ պետք է սահմանագծում, սահմանազատում արվի, ասում են՝Ադրբեջանը տարածքային նոր պահանջներ է դրել մեր առջեւ: Ի՞նչ է սպասվում. Դուք հաճախ եք գնում այնտեղ, հանդիպում, քննարկումներ ունենում:

-Ես կուզենամ առաջին հերթին իրերն իրենց անուններով կոչենք. ոչ թե «Տավուշի շուրջ զարգացումներ», այլ Նիկոլ Փաշինյանի աթոռը պահելու համար հերթական զոհաբաժինը Հայաստանից, որը պիտի ծառայի Նիկոլի իշխանազավթման երկարացմանը: Ոչ թե խոստովանում են իշխանությունները, որ ունեն սահմանազատում կամ սահմանագծում անելու անհրաժեշտություն կամ պայմանավորվածություն Ադրբեջանի հետ, այլ ինչպես Ալիեւն է իր ընկերոջը՝Նիկոլին անվանել, այդ ծաղրածուն հերթական անգամ ստանձնել է պարտավորություններ Հայաստանի ինքնիշխան տարածքին պատկանող որոշակի տարածքներ, բնակավայրեր թուրքին հանձնելու, որպեսզի թուրք-ադրբեջանական երազանքի իրականացումը մեկ քայլ էլ մոտենա:

-Տիկին Մկրտչյան, ասում է, որ այլ տարբերակ չունենք, ասում է, որ եթե չգնանք սահմանազատման, սահմանագծման, ապա Ադրբեջանը, մյուս կողմից էլ Թուրքիան նոր հարձակման են գնալու:

-Բա 2019-ին էլ ասում էին՝ Հայաստան-Արցախ, այլ տարբերակ չկա, մենք 40 000ք/կմ հայրենիք ունենք: 2020 թվականին ասում էր՝ վերջ, պատերազմով ինչ տվել եմ, տվել եմ, մնացածը Արցախի, Հայաստանի Հանրապետությունը անձեռնմխելի են: 2021 թվականին ասում էր՝վերջ, Գորիս-Կապանը տվեցի, այլեւս ոչինչ չեմ տալու, 2022-2023 թվականների՝ Հայաստանի վրա հարձակումների ժամանակ ասում էր՝ վերջ, Ջերմուկի հատվածն էլ ինչքան առաջ են եկել, եկել են: Ինքը ասաց, որ 29.800ք/կմ էլ հաստատ չէ, յոթ հարյուր քանիս է կանգնում այս պահի դրությամբ: Մտածում եք՝նոր մի քարտեզ չե՞ն հորինելու, Հ1-ի էկրանին մեծ դնեն, բոլորիս համոզեն, որ այսքանն է, այս Երեւանն է՝ իր արվարձաններով, կամ մի երկու-երեք մարզ՝ մեկ մարզկենտրոնով, եւ վերջ: Մտածում եք՝ այն մարդը, ով որ Շուշին դժբախտ ու դժգույն էր անվանում, նոր հոմանիշներ կամ հատկանիշների չի՞ մտածելու նոր բնակավայրերի վերաբերյալ: Մարդ, ով որ հայկական լեռների ձյունը պատճառ է բերում այդ լեռները հանձնելու համար, մտածում եք՝ որեւէ բան չի՞ կարող անել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐ

ՈՐՊԵՍԶԻ ԼԵԳԻՏԻՄ ՀԻՄՔԵՐ ՍՏԵՂԾԻ

Ադրբեջանի կողմից կեղծ լուրերի տարածումը, թե հայկական զինված ուժերը, իբր, զորաշարժեր են իրականացնում Ադրբեջանի հետ սահմանի տարբեր հատվածներում, կապված է ապրիլի 5-ին Բրյուսելում կայանալիք Փաշինյան-Բլինքեն-Ֆոն դեր Լայեն հանդիպման հետ. խորհրդարանում լրագրողների հետ զրույցում նման կարծիք հայտնեց Ամ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության դատգամավոր Արմեն Խաչատրյանը:

«Սա, իհարկե, կապ ունի ապրիլի 5-ի հանդիպման հետ, բայց մեզ խորթ չէ նաեւ Ադրբեջանի պրիմիտիվ ձեռագիրը, որն ամեն անգամ սադրիչ գործողություններ անելուց առաջ այսպիսի կեղծ լուրեր է տարածում, որպեսզի լեգիտիմ հիմքեր ստեղծի հարձակումներ իրականացնելու համար: Եթե երկու տարի առաջ նրանց դա հաջողվում էր, հիմա այդքան էլ չի հաջողվում, որովհետեւ հիմա ԵՄ դիտորդները գոնե ժամեր անց օբյեկտիվ իրականությունը ներկայացնում են աշխարհին՝ցույց տալով, որ Ադրբեջանը հերթական անգամ ստում է: Բոլորի համար արդեն շատ պարզ է, որ Ադրբեջանը ստում է, եւ ամբողջ աշխարհն արդեն օբյեկտիվ իրականության մասին տեղեկատվություն է ստանում Եվրոպական Միության անկախ դիտորդներից»,- ասաց Խաչատրյանը:

Ադրբեջանը վերջին օրերին կեղծ լուրեր է տարածում, թե հայկական զինված ուժերն Ադրբեջանի հետ սահմանի տարբեր հատվածներում զորաշարժեր են իրականացնում եւ պատրաստվում են հարձակողական գործողությունների: Հայաստանի պաշտպանության նախարարությունը հերքել է Ադրբեջանի կողմից տարածվող լուրերը: Հայկական զինված ուժերի կողմից տեղաշարժերի մասին Ադրբեջանի տարածած կեղծիքը հերքել է նաեւ ՀՀ-ում ԵՄ դիտորդական առաքելությունը: Առաքելությունն այդ լուրերի տարածումից հետո հայտարարել է, որ դիտորդները մոնիթորինգ են իրականացրել սահմանի երկայնքով, եւ անսովոր տեղաշարժեր ու զորքերի կուտակումներ չեն նկատվել: Զորաշարժերի մասին կեղծ լուրերին արձագանքել է նաեւ ԱՄՆ պետքարտուղարության մամուլի քարտուղար Մեթյու Միլերը, ով կասկածի տակ էր դրել դրանց արժանահավատ լինելը՝ հղում անելով ԵՄ դիտորդական առաքելության հայտարարություններին:

Ապրիլի 5-ին Բրյուսելում տեղի կունենա Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լայենի եռակողմ հանդիպումը, որի ժամանակ քննարկվելու են Հայաստանի դիմակայունությունն ամրապնդելու ու տնտեսությունը դիվերսիֆիկացնելու հետ կապված քայլերը: Պաշտոնական Բաքուն մի քանի անգամ հրապարակային իր դժգոհությունն է արտահայտել՝ կապված սպասվող հանդիպման հետ:

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ՝ ՀԱՅ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքում տեղի ունեցած քաղաքային խորհրդի ընտրությունների արդյունքներով քաղաքապետ է ընտրվել Էլեն Ասատրյանը:

Այս մասին ասվում է «Արեւելյան շրջանի առաջադեմ դեմոկրատներ»-ի (EAPD) կողմից տարածված հաղորդագրության մեջ:

Որպես առաջին կին թեկնածու՝ քաղաքային խորհրդում ամենաշատ ձայները նա ստացել էր 2022 թվականին:

Այս անգամ նա դարձել է առաջին ամերիկահայ կինը, ով զբաղեցրել է Լոս Անջելեսի մեծությամբ 4-րդ քաղաքի՝ Գլենդելի քաղաքապետի պաշտոնը:

«Ոչ մի կարեւոր բան հեշտությամբ չի ստացվում: Այս հաղթանակը պահանջում էր թիմային աշխատանք եւ հաստատակամություն: Մենք շնորհակալություն ենք հայտնում խորհրդի անդամներ Արդի Քասախյանին եւ պաշտոնաթող քաղաքապետ Դեն Բրոտմանին ճիշտ վարվելու համար»,- նշվում է հաղորդագրության մեջ՝ հավելելով, որ այս հաջողությամբ կարող են հպարտանալ բոլոր բնակիչները եւ շահագրգիռ կողմերը, քանի որ արդյունքներն արտացոլում են արդարությունն ու ներառականությունը:

ԽՈՉԸՆԴՈՏԵ՞Լ ԵՆ

«Հայաստանում Ադրբեջանի արտակարգ եւ լիազոր դեսպան Նիկոլ Փաշինը ասել է՝ ամեն ինչ արեք, որ Պետրոսյան Գեւորգի ընտրությունը կանխեք, որ ինքը չընտրվի»,- ապրիլի 3-ին լրագրողների հետ զրույցում ասաց Իրավագիտության ֆակուլտետի դեկանի թեկնածու առաջադրված, Ազգային ժողովի նախկին պատգամավոր Գեւորգ Պետրոսյանը:

Հիշեցնենք, որ Երեւանի պետական համալսարանում երեկ Իրավագիտության ֆալուկտետի դեկան էին ընտրում:

«Հիմա կտեսնենք, թե ինչ են անում իրենք: Ես մեծագույն հարգանքով եմ վերաբերվում Գիտական խորհրդի կազմին, գիտնականներ են, ես գիտության ոլորտի մարդ եմ, 27 տարի դասավանդում եմ, որեւէ առումով չեմ զիջում որեւէ թեկնածուի: Ինձ հարցնում էին, ասում էին՝ դուք էսինչի տե՞ղն եք դրել: Ես իմ առաջադրումով ցույց եմ տվել, որ ոչ մի պաշտոն ոչ մեկի տեղը չի: Տեղը քո տունն է, պաշտոնը տեղ չի, որ ասես՝ ես ստեղ եմ եղել, ոչ ոք իմ դեմ չդնի, ես դրել եմ կոտրելու այդ կարծրատիպը, որ ոչ մեկը չպետք է զմռսվի այդ պաշտոնին»,-ասաց նա:

Նշենք, որ այդ պաշտոնի համար մյուս հավակնորդը Իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար Հարություն Խաչիկյանն է:

Հիշյալ ֆակուլտետի նախկին երկարամյա դեկան Գագիկ Ղազինյանը չի առաջադրվել այս անգամ: Մամուլում շահագրգիռ որոշ սուբյեկտներ լուրեր էին շրջանառում, թե, իբր, նրա առաջադրմանն իշխանություններն են խոչընդոտել:

ՕՂԱԿԸ ՍԵՂՄՎՈՒՄ Է

«Եթե գործող իշխանությունը մնա իր տեղում, Հայաստանի շուրջ օղակը կշարունակի սեղմվել»,- ապրիլի 3-ին ասաց ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության ղեկավար, պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանը:

Նրա կարծիքով՝ եթե միասնություն լինի, հայ ժողովուրդը կկարողանա պաշտպանել իր երկիրը: «2020 թվականին նա կարողացավ պաշտպանել Արցախը. պարզապես անհրաժեշտ է նորմալ ղեկավարություն եւ արդյունավետ կառավարում, որը կկարողանա ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը եւ լուծել դրանից բխող կարեւորագույն խնդիրներն ու առաջնահերթ խնդիրները»,- ասաց Օհանյանը:

ՎԻԺԵՑՆՈՒՄ Է

Ադրբեջանն ամեն ինչ անում է Հայաստանի հետ խաղաղության գործընթացը վիժեցնելու համար. խորհրդարանում լրագրողների հետ զրույցում նման կարծիք է հայտնել ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանը:

«Որեւէ մեկը չի ասել, թե Ադրբեջանը խաղաղասեր է, եւ Ադրբեջանի հայտարարությունները հիմնականում կեղծ են: Բայց Հայաստանը միանշանակ գնալու է խաղաղության ճանապարհով եւ պարտադրելու է խաղաղությունն Ադրբեջանին: Ադրբեջանը պետք է լինի կառուցողական, Ադրբեջանին պետք է ստիպել, որպեսզի նա վերադառնա կառուցողական դաշտ եւ հաշվի նստի այն հանգամանքի հետ, որ Հայաստանը ինքնիշխան, ժողովրդավարական երկիր է, պետք է հարգի մեր սուվերենությունը, եւ անցնենք առաջ»,- ասել է պատգամավորը:

Նրա խոսքով՝Ադրբեջանն այսօր խոսում է ուժի դիրքերից՝ օգտվելով այն հանգամանքից, որ ուժերի բալանսը խախտվել է: «Բայց մենք այսօր զինված ուժերում շատ լուրջ բարեփոխումներ ենք անում, որոնք քիչ տեսանելի են, բայց որոշ ժամանակ անց մենք ունենալու ենք այնպիսի բանակ, որը հնարավորություն կունենա ապահովել մեր երկրի ինքնիշխանությունը, սուվերենությունը, տարածքային ամբողջականությունը: Խնդիրն այսպես է դրված, եւ մենք դրան հասնելու ենք»,- նշել է Արմեն Խաչատրյանը:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՎԵՐԱՑՆԵԼ ԱԿԱԴԵՄԻԱՆ

«Երբ առաջին անգամ այս դահլիճ ոտք եմ դրել լաբորանտի կարգավիճակով, երկչոտ էի, վախեցած, որովհետեւ խոսքը Գիտությունների ազգային ակադեմիայի մասին էր: Այսօր, երբ արդեն ակադեմիկոսի կարգավիճակ ունեմ, չեմ կարողանում պատկերացնել, որ մենք պիտի խոսենք այն մասին, որ վաղը ակադեմիան կարող է չլինել: Սա ուղղակի մարդու ուղեղի մեջ չի տեղավորվում»,- ապրիլի 3-ին՝ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ, ասաց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ասոն Մելքոնյանը:

Նրա խոսքով՝ թե՛ նախորդ, թե՛ ներկայիս իշխանությունների ժամանակ բարձրացվել է հարցը, թե ինչ են ուզում իշխանությունները գիտությունից:

«Այո, գիտությունը պետք է արագ զարգանա, բայց չի կարելի այն քանդուքարափ անել, եւ նրանից պահանջել անհնարինը: Մենք դեմ չենք Ակադեմիական քաղաքին, դուք սարքե՛ք, մենք կգանք, կտեսնենք լողավազանները, մարզադաշտերը, Մասիսն էլ կերեւա, ինչպես ցույց է տրվել ֆիլմում: Կթողնենք մեր շենքերը, կգանք, կաշխատենք այդտեղ, բայց ինչպես մեր ընկեր Արեգ Միքայելյանն ասաց, մենք թերահավատ ենք այս հարցում, որովհետեւ մինչ Ակադեմիական քաղաքը կա 2027 թվականի հունվարի 1-ից մեզ չֆինանսավորելու սպառնալիքը»,- պարզաբանեց Աշոտ Մելքոնյանը:

Նա պատմեց, որ իրենց ստացած գրության մեջ ասվում էր, որ այն կառույցները, որոնք չեն միանա բուհերին, 2027 թվականի հունվարի 1-ից չեն ֆինանսավորվի: Պատմական գիտությունների դոկտորը վստահ է՝ եթե Կառավարությունն այդ տարբերակով է որոշել ակադեմիան միացնել բուհերին, նշանակում է, որ ցանկանում է վերացնել այն ակադեմիան, որը ստեղծել են Հովսեփ Օրբելին եւ Վիկտոր Համբարձումյանը:

Խոսելով ԳԱԱ-ի կարեւորության մասին՝ Աշոտ Մելքոնյանը մի դեպք հիշեց, երբ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի հետ մտնում էին ակադեմիայի շենք, նա գլխարկը հանում էր եւ ասում, որ գլուխ է խոնարհում ակադեմիայի առաջ՝որպես մի կաճառի, որը մեր ազգային արժեքներից մեկն է:

Անդրադառնալով գիտաշխատողների ատեստավորման մասին որոշմանը՝ Աշոտ Մելքոնյանը նշեց, որ դա ահասարսուռ որոշում է, որի նպատակն է մինչ 2027 թվականը ազատվել ակադեմիայի աշխատակիցների մեծագույն մասից:

«Ի՞նչն է իմաստը. ասում են սկոպուսային ամսագրերում պիտի ունենաք հրապարակումներ, եթե 2 տարվա ընթացքում չանեք, դուրս եք մնում: Այսինքն՝գիտաշխատողը, որը հարյուրավոր այլ հրապարակումներ ու գրքեր ունի, սակայն սկոպուսային ամսագրերում հրապարակում չունի, ստիպված է լաբորանտ աշխատել»,-պարզաբանեց Աշոտ Մելքոնյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

«ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՓԱԿՈՒՂՈՒ ՄԵՋ Է»

«Հայաստանի ներկայիս իշխանությունները իզուր են համեմատում հայկական հին քաղաքակրթությունը, որն ունի դարավոր պատմություն, Եվրամիության հետ, որի գործերն այսօր անկեղծորեն վատ են»,- հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Ես այսօր տեսա մեր զրույցի ամփոփագիրը եւ տեսա Հայաստանի պաշտոնական կառույցների ներկայացուցիչներից մեկի մեջբերումը, որն ասում էր, որ Հայաստանը եվրոպական ժողովրդավարական եւ որոշ այլ արժեքների կրողն է:

Ինչո՞ւ են համեմատում հին հայկական քաղաքակրթությունը՝ մշակույթի, պատմության, պետականության հետ, որը գոյություն ուներ, ներեցեք, եվրոպական ժողովրդավարությունից շատ առաջ: Եվրամիությունն իսկապես փակուղու մեջ է», -ասել է նա:

«Հայաստանը մշակույթ է, պետական կառույց, եւ սրանք պետականության հիմքերն են, որոնք հազարավոր տարիներ առաջ են եղել, դրանք հազարամյա պատմություն ունեն»,- շարունակել է Զախարովան եւ ընդգծել, որ Երեւանը գտել է «մոդել, որի մասին Արեւմուտքում ոչ ոք լրջորեն չի խոսում»:

Դիվանագիտական գերատեսչության պաշտոնական ներկայացուցիչն ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ այժմ ԵՄ դիրքորոշումը լիովին տեսանելի է՝ հաշվի առնելով քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ իրավական ցուցանիշները:

«Այդ ամենը չի ստացվում, ամեն ինչ քանդվում է»,- ընդգծել է Զախարովան՝ նշելով, որ Հայաստանը փորձում է ինտեգրվել «ճգնաժամի մեջ գտնվող համայնքի հետ»:

ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ Է

«Իշխանության կողմից Տավուշի մարզի ռազմավարական նշանակություն ունեցող տարածքների միակողմանի հանձնման եւ հակապետական քաղաքականության դեմ ընդվզման սկիզբը փաստացի դրեց Ոսկեպարը, որն այլեւս ոչ միայն ընդվզման, այլ նաեւ հայկական պետականության համար պայքարի կիզակետն է»,- իր ֆեյսբուքյան էջում հայտնել է «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության նախագահ Սուրեն Պետրոսյանը:

«Հաշվի առնելով առկա համազգային խորքային ճգնաժամը՝ այլեւս հրամայական է, որ ազգի յուրաքանչյուր շերտի ներկայացուցիչ (մշակութայինից մինչեւ ռազմական գործիչ՝ ներառյալ սփյուռքը) ոչ միայն խոսքով, այլ նաեւ վարքով արտահայտի իր դիրքորոշումը ստեղծված բարդագույն իրավիճակում՝ կանգնելով ոսկեպարցու կողքին, միեւնույն ժամանակ տեղային պայքարը դարձնելով համազգային:

Արցախի դավադիր կորստից հետո, կազմաքանդելով նաեւ Հայաստանի Հանրապետության անվտանգային (հոգեւոր եւ ֆիզիկական) համակարգը, ներկայիս վարչակազմը Բաքվի միակողմանի պահանջով պատրաստվում է հանձնել նաեւ Տավուշի մարզի ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներ, որով անդառնալի հարված կհասցվի ՀՀ պետականությանը:

Ոսկեպարին, Կիրանցին, Բաղանիսին, Բերքաբերին ու ՀՀ մյուս սահմանային բնակավայրերին սպառնացող վտանգը համազգային եւ համապետական մարտահրավեր է, որը վերաբերում է ինչպես ՀՀ բոլոր քաղաքացիներին, այնպես էլ ողջ հայությանը, քանի որ այստեղ վճռվելու է հայոց պետականության հարցը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝մենք՝տարբեր մասնագիտական ոլորտներ ներկայացնող մի խումբ քաղաքացիներս, մեկնել ենք Ոսկեպար՝գյուղի բնակիչների կողքին կանգնելու, միասին պայքարը դարձնելու համազգային եւ իր հաղթական ավարտին հասցնելու նպատակով:

Վերոնշյալ նպատակներից ելնելով, ինչպես նաեւ միասնական ճակատ ձեւավորելու եւ բոլոր աշխատանքները (այդ թվում՝ միասնական տեղեկատվական կենտրոն) համակարգելու նպատակներով գյուղի բնակիչների հետ համատեղ ձեւավորել ենք «Հայկական պետականության համար» կոորդինացնող շտաբը»,- գրել է նա:

ՃՆՇՈՒՄ ԵՂԵ՞Լ Է

ԻՆՉՈ՞Ւ Է ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ ԴՐՍԵՎՈՐՎԵԼ

Armlur.am-ի հետ զրույցում ԱԱԾ նախկին տնօրեն Միքայել Համբարձումյանը հաստատեց մեր տեղեկությունը, որ հրավիրվել է Հակակոռուպցիոն կոմիտե՝ հարցաքննության: Armlur.am-ը ԱԱԾ նախկին տնօրեն Միքայել Համբարձումյանից հետաքրքրվեց. «Պարո՛ն Համբարձումյան, «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ձեզ հրավիրել են Հակակոռուպցիոն կոմիտե՝ հարցաքննության՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահին ճնշելու հետ կապված: Ի վերջո, ճնշում եղե՞լ է, թե՞ ոչ:

Ի պատասխան՝ վերջինս հայտնեց. «Այո՛, ինձ կանչել են հարցաքննության, մասնակցել եմ առերես հարցաքննության, չնայած, իմ կարծիքով, Հայկուհի Հարությունյանի եւ իմ ցուցմունքների միջեւ էական հակասություններ չեն եղել: Օրեր առաջ նշված վարույթը կարճվել է, քանի որ իմ մասով վերոհիշյալ պաշտոնյայի նկատմամբ ճնշում չի եղել, ինչը դրա վառ ապացույցն է: Նման իրավական ընթացակարգը եւ գործողությունները Հ. Հարությունյանի հայտարարությունից հետո համարում եմ օրինական եւ նորմալ: Ձեզ՝ որպես իրավապահ համակարգի հետ կապված խորագիտակ լրագրողի, առաջարկում եմ հնարավորինս մանրամասն լսել ու վերլուծել Հ. Հարությունյանի վերոհիշյալ հայտարարություններն իր նկատմամբ ճնշումներ գործադրելու մասով: Վստահ եմ, որ ինքներդ կտեսնեք նրա նկատմամբ գործադրված հնարավոր ճնշումների մասին վկայող այլ ակնհայտ օրինակներ: Օրինակ՝ ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի վերաբերյալ բարեվարքության բացասական եզրակացություն տալու մասով: Հուսամ, որ դրանից հետո հարց կբարձրացնենք գլխավոր դատախազի առջեւ, թե արդյոք նույն ջանասիրությամբ հնարավոր ճնշումների առնչված այսօր գործով մյուս պաշտոնյաների վերաբերյալ քննություն իրականացվել է, թե ոչ: Եթե ոչ, ապա ինչու է իմ պարագայում նման տարբերակված մոտեցում դրսեւորվել»:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանի ճնշման քրեական վարույթով Հակակոռուպցիոն կոմիտե է հրավիրվել եւ հարցաքննվել ՔՊ խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը: Ավելին՝ քրեական վարույթի շրջանակներում հարցաքննվել է նաեւ ԱԱԾ նախկին տնօրեն Միքայել Համբարձումյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հարցաքննվել է նաեւ Հայկուհի Հարությունյանը:

Բացի այդ, ԱԱԾ նախկին տնօրենն ու Հայկուհի Հարությունյանը եւս առերեսվել են կոմիտեում:

Ինչպես հայտնի է, դեկտեմբերի 6-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանի կողմից Ազգային ժողովում հնչեցրած հայտարարության առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել:

Խոսքը, մասնավորապես, իր պաշտոնավարման ընթացքում եւ, դրանով պայմանավորված, իր նկատմամբ ճնշման մի դեպքի մասին էր:

Պատասխանելով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Կոնջորյանի հարցին՝ Հարությունյանը նշել էր, որ ԱԱԾ-ից եղել է զանգ կոնկրետ սուբյեկտի վերաբերյալ կայացված բարեվարքության եզրակացության առնչությամբ:

«Ներողություն եմ խնդրում, բայց Ձեր պահանջին հետեւելով՝ հրապարակում եմ՝ Ազգային անվտանգության ծառայությունից.. որ բացասական եզրակացություն այն թեկնածուի մասով, որ ԱԺ-ում պիտի քվեարկվեր...

Արժանացել է բացասական եզրակացության, եւ դա անհանդուրժելի է նաեւ... Ներկայացվել է որպես ազգային անվտանգության խնդիր, քանի որ այդ թեկնածուի ընտրվելը պիտի ապահովվեր: Վերջին բառակապակցությունը գուցե շատ սուր հնչի: Ես անմիջապես՝ հենց այդ պահին, զանգի մասին տեղեկացրել եմ եւ փորձել եմ ճշգրտում անել՝ առհասարակ դա՝ որպես երեւույթ, ինչ-որ մեկը կառավարությունում տեղյակ է, թե ոչ, եւ պիտի շնորհակալություն հայտնեմ, որ անմիջապես արձագանքը եղել է...

Հաջորդ օրը նույնիսկ պարոն Աղաջանյանը (նկատի ունի պատգամավոր Էդուարդ Աղաջանյանին՝ հեղ.) այցելել էր նույն շենքում տեղակայված մեկ այլ կառույցի՝ Բնապահպանական տեսչական մարմին, եւ նաեւ այցելեց հանձնաժողով, եւ 4 անդամով (այդ ժամանակ 4 անդամ էինք), ես անձամբ բոլորի ներկայությամբ դեպքը պարոն Աղաջանյանին ներկայացրել եմ: Վերարտադրում եմ նաեւ պարոն Աղաջանյանի խոսքերը, եւ շնորհակալություն նաեւ իրեն. դա մեր եւ մեր քաղաքական թիմի կողմից անհանդուրժելի վարքագիծ է, եւ նման դեպքերը մեզ համար անընդունելի են»,-ասել էր նա:

Գլխավոր դատախազությունից հայտնել են, որ վերոնշյալ դեպքի առթիվ Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Վերջինս սահմանում է քրեական պատասխանատվություն պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու համար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

ԱՊՕՐԻՆԻ ԹՄՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մարտի 29-ին Երեւան քաղաքի Արին Բերդի փողոցի մոտակայքում նշված վայրում ծառայություն իրականացնող պարեկները նկատել են երկու անձանց, որոնցից մեկը, նկատելով իրավապահներին, ձեռքից ինչ-որ իր է նետել եւ ավտոմեքենայով հեռացել:

Ավտոմեքենան կանգնեցվել է, եւ նշված անձինք, իրենց կողմից շահագործվող մեքենայով հանդերձ, տեղափոխվել են Ոստիկանության Էրեբունու բաժին: Պարզվել է, որ նշված անձինք հանդիսանում են Ուկրաինայի քաղաքացիներ:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Հիշյալ անձինք, հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալվել են:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է կպչուն ժապավենով փաթեթավորված, թմրամիջոցի նմանվող զանգվածով 8 փաթեթ: Նշանակված դատաքիմիական փորձաքննության եզրակացությամբ արդեն իսկ հաստատվել է, որ նշված փաթեթներից երկուսի պարունակությունը «Մեթադոն» տեսակի թմրամիջոց է:

Օտարերկրացիների կողմից շահագործվող ավտոմեքենայի խուզարկությամբ, որը, ինչպես պարզվել է, ձերբակալվածներից մեկի կողմից վարձակալվել է, հայտնաբերվել է եւս 10 հատ դեղին, 10 հատ կապույտ գույնի կպչուն ժապավենով փաթաթված եւ 10 հատ ստվարաթղթե փաթեթներ: Վերջիններիս պարունակությունը պարզելու նպատակով նշանակվել է փորձաքննություն:

Նախաքննության ընթացքում իրականացված ապացուցողական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ ավտոմեքենան վարձակալած անձը նախնական համաձայնության է եկել վերոհիշյալ իր ծանոթի հետ խմբի կազմում, շահադիտական դրդումներով, յուրաքանչյուր փաթեթի տարածման դիմաց գումար ստանալու պայմանով թմրամիջոցներ իրացնելու հարցի շուրջ: Ապա քննությամբ դեռեւս չպարզված անձից իրացման նպատակով նրանք ապօրինի ձեռք են բերել թմրամիջոցների 38 փաթեթ, որոնք 2024 թվականի մարտի 29-ին տեղափոխել են Երեւան քաղաքի Արին Բերդ փողոց: Սակայն նկատելով ՀՀ ՆԳՆ պարեկային ծառայության աշխատակիցներին՝ իրենց մոտ գտնվող թմրամիջոցների 8 փաթեթը՝ «Մեթադոն» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ, նետել են՝ փորձելով խույս տալ պարեկներից, ինչը կանխվել է վերջիններիս կողմից:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ նշված երկու անձանց մեղադրանք է ներկայացվել: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում ընտրելու մասին, որը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրը, ինչպես նաեւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության շղթայում ներգրավված հնարավոր այլ անձանց ինքնությունը պարզելու ուղղությամբ:

Ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել են հանձնարարություններ:

ԳՐԻԳՈՐԻ ԽԱՉԱՏՈՒՐՈՎ

«ՀՈՂ ՏԱԼԸ ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ Է»

Հակակոռուպցիոն դատարանում երեկ ընթանում էր Գրիգորի Խաչատուրովի գործով դատական նիստը:

Երեկ դատարանում Armlur.am-ը մի քանի հարցեր ուղղեց Գրիգորի Խաչատուրովին: Մասնավորապես՝ ի՞նչ սպասել Տավուշի մարզում, քանի-որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պատերազմով է վախեցնում հանրությանը:

«Չկա պայմանագիր, հող տալը հակասահմանադրական է: Այն, ինչ ասել եմ նախկինում, ուժի մեջ է: Սկզբում խաղաղություն է լինում, հետո՝ դելիմիտացիա: Եթե սա իրականանա, Տավուշին սպասվում է Հայաստանից օտարված կյանք»,- հայտարարեց Խաչատուրովը:

Հիշեցնենք, որ 2021 թվականին Խաչատուրովը հայտնել էր. «Անհամաստ եմ համարում հայտարարության մեջ շատ ընդլայնվել, սակայն միայն այն փաստը, որ երեք տարիների ընթացքում Ն. Փաշինյանի նախաձեռնությամբ ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի պաշտոնում նշանակվել եւ ազատվել են թվով չորս բարձրագույն զինվորական կոչում ունեցող պաշտոնատար անձինք, դա հաստատում է ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող Ն. Փաշինյանի ոչ ադեկվատ եւ անպատասխանատու լինելը: Յուրաքանչյուր օր, ժամ, Ն. Փաշինյանի կողմից ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնելով, քայքայվում է ՀՀ անվտանգությունը եւ կասկածի տակ դրվում մեր հայրենիքի ապագան: Ուստի, կրկին անգամ վերահաստատելով ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի 2021թ. փետրվարի 25-ի հայտարարությունը՝ կրկին պահանջում եմ Ն. Փաշինյանի անհապաղ հրաժարականը»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 2-ից 3-ը ՀՀՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 118 դեպք, որից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԵՐԱԴԱՐՁՐԵԼ ԵՆ

Տավուշի մարզի զինկոմիսարիատից վարժական հավաքներին մասնակցելու ծանուցագրեր են հանձնվել Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղի ավելի քան մեկուկես տասնյակ բնակիչների: Ոսկեպար գյուղից տեղեկացա, որ Ոսկեպարի վարչական ղեկավար Իշխան Աղբալյանը Նոյեմբերյանի համայնքապետարանի միջոցով զինկոմիսարիատ է հանձնել այդ ծանուցագրերը, քանի որ Ոսկեպարը կարող է ենթարկվել ադրբեջանական զինուժի հարձակման, ոսկեպարցիների կարիքը հենց իրենց գյուղում է զգացվում:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՉԵՆ ՏՐՎԵԼ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Ն. Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ նախկինում ադրբեջանաբնակ 4 գյուղերի՝Բաղանիս-Այրումի, Ղզլհաջիլիի, Աշաղը Ասքիպարայի (Ներքին Ոսկեպարի), Խերմիլիի տարածքները Ադրբեջանին հանձնելու հարցում հաշվի է առնվել արդյոք Ոսկեպար, Բաղանիս, Կիրանց, Ոսկեվան գյուղերի բնակչության կարծիքը: Մարզպետը պատասխանել է. «Սահմանամերձ գյուղերի բնակչության հետ կայացել են հանդիպում եւ քննարկումներ, բնակիչներին հուզող հարցերին տրվել են պատասխաններ»: Իրականում Ոսկեպարի, Բաղանիսի, Կիրանցի, Ոսկեվանի բնակիչների հուզող հարցերին վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ այլ պաշտոնյաների կողմից սպառիչ պատասխաններ չեն տրվել: Տավուշում 4 գյուղերի տարածքների հանձնումից հետո սահմանամերձ գյուղերի բնակիչների անվտանգության, սահմանագոտում նրան կողմից հողերի մշակության, Նոյեմբերյան-Իջեւան տրանսպորտային հաղորդակցության եւ այլնի վերաբերյալ բնակիչների մտահոգությունների վերաբերյալ բավարար պարզաբանումներ չեն տրվել:

ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բերդ համայնքի բնակիչներից դժգոհություններ ենք լսել, որ Բերդ քաղաքի բժշկական կենտրոնում հեմոդիալիզի սարքավորում չկա, եւ հեմոդիալիզի կարիք ունեցողները, Բերդ համայնքից մեծ հեռավորություն անցնելով, հեմոդիալիզ են ստանում Իջեւանի եւ Նոյեմբերյանի բժշկական կենտրոններում: Հիմնահարցի կապակցությամբ դիմեցինք Տավուշի մարզպետարան, որտեղից պարզաբանեցին, որ Բերդ համայնքում հեմոդիալիզի կարիք ունեն 10 բուժառուներ, նրանցից 9-ը հեմոդիալիզ են ստանում Իջեւանի ԲԿ-ում, իսկ 1-ը՝ Նոյեմբերյանի ԲԿ-ում: Մարզպետարանից հավելեցին, որ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալի՝ առաջիկա օրերին Տավուշի մարզ կատարելիք այցի ժամանակ կքննարկվի Բերդի ԲԿ-ում հեմոդիալիզի բաժանմունք բացելու հնարավորությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ՕՐԵՆՔ

ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ՝ ՆԳՆ ԿՈՂՄԻՑ

ՀՀ ներքին գործերի նախարարությունը խրախուսական երկու նորմ է ներդնում, որոնցից մեկը կգործի ապրիլի 5-ից, մյուսը՝ մայիսի 1-ից: Դրանցից օգտվելու դարագայում 5000 դրամանոց վարչական տուգանքը կկազմի 2800 դրամ:

Այս մասին ապրիլի 3-ին հրավիրված մամուլի ասուլիսին ասաց ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արման Չիլինգարյանը:

Գնդապետ Չիլինգարյանը նշեց՝ փետրվարի 28-ին ԱԺ-ի կողմից ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը ՀՀ նախագահի կողմից ստորագրվել եւ հրապարակվել է մարտի 26-ին եւ ուժի մեջ է մտնելու ապրիլի 5-ից՝ բացառությամբ որոշ դրույթների, որոնց հետ կան որոշակի ժամկետներ:

«Օրենքի հիմնական ուղղվածությունը վերաբերում է երեք կարեւոր հանգամանքի՝ առաջին հերթին՝ նախատեսել խրախուսական դրույթներ այն անձանց համար, որոնք ունեն վարչական տուգանքի ձեւեր եւ ցանկություն ունեն ժամանակից շուտ էլեկտրոնային եղանակով իրազեկվելու եւ դրանից հետո կատարելու իրենց վարչական ակտը: Երկրորդը վերաբերում է ժամկետից շուտ տուգանքը վճարողների համար խրախուսական նորմ նախատեսելուն: Երրորդը՝ մինչեւ ապրիլի 5-ը, այսինքն՝ մինչեւ օրենքը ուժի մեջ մտնելը կատարված վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքները օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, կամ մինչեւ օրենքը ուժի մեջ մտնելը դրանց 50 %-ը վճարելու պարագայում, իսկ հարկադիր կատարման վարույթում գտնվելու դեպքում՝ նաեւ կատարողական ծախսերը, այդ վարույթները ավարտված համարելուն վերաբերող դրույթներն են: Դրանից բացի, փոփոխություններ են կատարվել նաեւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի մի քանի հոդվածներում, որոնցով նվազեցվել է օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով նախատեսված՝ կանգառի եւ կայանման կանոնները խախտելու համար տուգանային միավորի ձեւով պատասխանատվության միջոցը. 0,5 տուգանային միավորի փոխարեն նախատեսվել է 0,25 տուգանային միավոր: Եվ հաջորդ փոփոխությունը, որ արվել է տուգանքների մասում, ապակիների լուսաթափանցելիության չափի խախտմամբ տրանսպորտային միջոցները վարելու համար մեկ տարվա ընթացքում կամ կրկին յուրաքանչյուր հաջորդ անգամ հանելու, այսինքն՝ կրկնակիության համար նախատեսվել է պատասխանատվություն տուգանքի ձեւով՝ 29 հազար դրամի չափով, եւ 2 տուգանային միավորի ձեւով: Նշեմ, որ առաջին անգամ կատարվելու դեպքում տուգանքի չափը կազմում է 25 հազար դրամ՝ առանց տուգանային միավորի»,-ներկայացրեց նա:

Պարեկային ծառայության պետի տեղակալը կատարված փոփոխությունները նկարագրեց ավելի մանրամասն:

«Խրախուսական նորմերը երկուսն են, որոնցից մեկը ապրիլի 5-ից է ուժի մեջ մտնելու, մյուսը՝ մայիսի 1-ից: Ապրիլի 5-ից հետո ուժի մեջ կմտնի տուգանքը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում վճարելու խրախուսական նորմը: 15-օրյա ժամկետում վճարելուց հետո վարորդը կվճարի 30 տոկոսով պակաս, այսինքն՝ նշանակված տուգանքի 70 տոկոսը վճարելուց հետո կհամարվի պարտավորվածությունն ամբողջությամբ կատարված: 5000 դրամ տուգանքի պարագայում՝ 3500 դրամ, 10 հազարի դեպքում՝ 7000 դրամ: Բացառություն են կազմում վարչական ակտի բողոքարկման դեպքերը:

Մայիսի 1-ից ուժի մեջ մտնող խրախուսական նորմը տեսանկարահանող սարքերով եւ արագաչափերով արձանագրված խախտումներին է վերաբերում: Այն անձինք, որոնք նախապես մայիսի 1-ից հետո գործող մեր էլեկտրոնային հարթակում կգրանցվեն եւ կտրամադրեն էլեկտրոնային փոստ, ցանկություն կհայտնեն իրենց վարչական իրավախախտումների վերաբերյալ ծանուցվել էլեկտրոնային եղանակով, կստանան օրենքով նախատեսված տուգանքի չափից 20 տոկոսով պակաս տուգանք: Խրախուսական երկու նորմերը կարող են գործել նաեւ միասին: Եթե մայիսի 1-ից էլեկտրոնային եղանակով ծանուցվեք, այնուհետեւ օգտվեք 15-օրյա ժամկետում վճարելու խրախուսական նորմից, կստացվի, օրինակ, 5000-ի փոխարեն 4000 դրամանոց որոշում, այնուհետեւ 30 տոկոսով պակաս՝ 1200 դրամ էլ պակաս էլ կլինի, կստացվի 5000-ի փոխարեն 2800 դրամ»,-ներկայացրեց գնդապետը:

Նա վստահեցրեց՝ առաջին հայացքից բարդ թվացող փոփոխությունները մտապահելը վարորդների համար դժվար չի լինի: Իսկ փոփոխությունները կատարելու անհրաժեշտություն առաջացել է՝ պայմանավորված էլեկտրական ծանուցման համակարգի անցնելու խնդրով, ինչը ավելի դյուրին կդարձնի գործընթացը: Գնդապետը նաեւ տեղեկացրեց, որ այս նոր փոփոխությունների ցանկը հանրությանն առավել հասանելի կդառնա՝ հնարավոր բոլոր միջոցներով տարածելով:

ՏԿՅԱԼՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԴԻՏԱԿԵՏՈՒՄ

ArmLur.am-ը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունը 2022 թվականի հունվար- դեկտեմբեր ամիսներին կազմել է 1 մլն 665 հազար մարդ, իսկ 2023 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 2 մլն 316 հազար մարդ:

Այսինքն՝ Հայաստանը զբոսաշրջիկները դիտարկում են որպես հարմար տարբերակ հանգստի, ապրելակերպի եւ առօրյա կյանքի համար:

2023 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին Հայաստան է այցելել Ադրբեջանի 13 քաղաքացի, իսկ Թուրքիայից 12 հազար 359 մարդ է եկել Հայաստանի Հանրապետություն:

Հայաստան ամենաշատ զբոսաշրջիկներն այցելել են Գերմանիայից, Բելառուսից, Իտալիայից եւ այլն: Ուշագրավն այն է, որ նախորդ տարի Հնդկաստանից Հայաստան է եկել 34 հազար 687 մարդ, Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ 150 հազար 766 մարդ, Ռուսաստանի Դաշնությունից՝1 մլն 139 հազար 853 մարդ:

Տնտեսագետները պնդում են, որ Հայաստանը թանկ երկիր չէ զբոսաշրջիկների համար: Միջազգային ատյանների հայտարարությունները, որոնք արգելում են իրենց քաղաքացիներին այցելել Հայաստան, չեն խոչընդոտում զբոսաշրջիկներին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 1 մարդ զոհվել է, 16-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՎՆԱՄՆԵՐ ԿԼԻՆԵՆ

«Պաշտոնական Երեւանը ռուսական «Միր» վճարային համակարգի քարտերի աշխատանքի արգելափակման հարցում եւս ենթարկվել է Արեւմուտքի ճնշմանը. Հայաստանի տնտեսությունը միայն կտուժի դրանից»,- հերթական ճեպազրույցի ժամանակ ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Երկրի տնտեսությունն այս քայլի հետեւանքով զգալի վնասներ կկրի, երկրի քաղաքացիները կբախվեն լուրջ անհարմարությունների, Ռուսաստանում աշխատող հայերի համար դժվար կլինի գումար ուղարկել հայրենիք, զբոսաշրջիկները չեն կարողանա քարտով վճարումներ կատարել: Վստահ եմ՝ այս քայլի հետեւանքով վնասներն ավելի շատ են, քան արեւմտյան սահմանափակումների վնասները»,- ասել է ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը:

ԴԵԿԱՆ Է ԸՆՏՐՎԵԼ

Երեւանի պետական համալսարանում երեկ դեկանի ընտրություններ էին: Հարություն Խաչիկյանն ընտրվեց Իրավագիտության ֆակուլտետի դեկան: 59 կողմ ձայն ստացել է Խաչիկյանը, Պետրոսյանը՝8:

Հիշեցնենք, որ Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանը, որը դեկանի պաշտոնում է 1996 թվականից, այս տարի դեկանի ընտրություններում չի առաջադրվել. վերջինս հրաժարվել է եւ նշել, որ տեղը զիջելու է իրենից ոչ պակաս ֆակուլտետի հնաբնակ Հարություն Խաչիկյանին:

Հարություն Խաչիկյանը հանդիսանում է Իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ 1994 թվականից, իսկ 2012 թվականից մինչ օրս ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր է: Խաչիկյանի հետ ինքնաառաջադրվել էր նաեւ ՀՀ ԱԺ ԲՀԿ նախկին պատգամավոր, իրավաբան Գեւորգ Պետրոսյանը:

ԱՐՑԱԽԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Մարտի 29-ին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ուղեկցությամբ Լեռնային Ղարաբաղից Հայաստան է տեղափոխվել երկու անձ. «Լուրերի» տեղեկություններով՝ նրանք ամուսիններ են՝ Սամվել Գալստյանն ու Մարգարիտա Շահնազարյանը: Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության հաղորդակցման ծրագրերի ղեկավար Ջառա Ամատունին լրատվամիջոցին տեղեկացրել է, որ անձանց Հայաստան են տեղափոխել նրանց իսկ ցանկությամբ: Ըստ Ամատունու՝ Լեռնային Ղարաբաղում այս ընթացքում տարբեր հարցերով աջակցում են մոտ 20 հայի, օգնում չխզել կապը Լեռնային Ղարաբաղից դուրս գտնվող հարազատների հետ: Կարմիր խաչի օգնությամբ հոկտեմբերից Հայաստան է տեղափոխվել ավելի քան 50 անձ:

«Ցանկացած մարդ, որ տեղափոխվում է իր ցանկությամբ, որեւէ անձի չենք կարող դրդել որեւէ արարքի. հայտնում են, մենք՝որպես չեզոք միջնորդ, օգնում ենք, մեր առաքելությունն է ապահովել տեղափոխությունը, երբ հատում են սահմանը, մեր առաքելությունն ավարտվում է, նրանք պատկան մարմինների, հարազատների հետ են»,- ասել է Ամատունին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՁԵՎԱՉԱՓՈՎ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանն աշխատանքային հանդիպում է ունեցել թատերահամերգային կազմակերպությունների ղեկավարների ու ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են ոլորտի վերաբերյալ մի շարք առանցքային հարցեր:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ Ժամանակակից արվեստի վարչության պետ Սվետլանա Սահակյանը:

«Մենք կարեւորում ենք ոլորտի ներկայացուցիչների հետ պարբերական հանդիպումներն ու առկա խնդիրների քննարկումը: Հատկապես ցանկանում եմ շեշտել պետական կառույցների՝ «ՀՀ մշակույթի պահպանության, զարգացման եւ հանրահռչակման 2023-2027 թվականների ռազմավարության» ուղղություններին հետեւելու առաջնահերթությունը, որով պայմանավորված է ոլորտի հետագա զարգացումը»,- ասել է Դանիել Դանիելյանը:

Հանդիպմանն ամփոփվել են առաջին անգամ անցկացվող «Թատերական շաբաթ» ծրագրի արդյունքները: Ըստ թատրոնների ներկայացուցիչների՝ ծրագիրը հաջողել է՝ ապահովելով բազմամարդ մասնակցություն եւ մեծ հետաքրքրություն դպրոցականների շրջանում:

Քննարկման առանցքում նաեւ թատերական, թատերահամերգային հաստատությունների տնօրենների, աշխատակիցների ատեստավորման նոր կարգի եւ որակավորումների բարձրացման վերաբերյալ հարցերն էին: Մասնավորապես՝ կողմերն անդրադարձել են օրենսդրական դաշտի կարգավորման խնդիրներին:

Անդրադարձ է եղել նաեւ Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ներդրված մշակութային հաստատությունների ֆինանսավորման նոր մոդելին, որն առաջիկայում նախատեսվում է կիրառել նաեւ այլ հաստատություններում:

Ըստ ֆինանսավորման նոր մոդելի՝ յուրաքանչյուր տարի կազմակերպությանը տրամադրվում է իր կողմից կանխատեսվող սեփական եկամուտների կրկնապատիկի չափով գումար: Այդ գումարը կարող է օգտագործվել պահպանման ծախսերի, աշխատակիցների վարձատրության բարձրացման, նոր եւ վերափոխված ներկայացումների բեմադրության, հյուրախաղերի, անհրաժեշտ կապիտալ ծախսերի համար:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը ներկաներին հայտնել է նաեւ ոլորտում մարքեթինգի միասնական հարթակ ստեղծելու անհրաժեշտությունը:

«Մեզ համար առաջնային է թատերական ոլորտն առավել տեսանելի եւ ընկալելի դարձնելը հանրության համար: Դա պետք է արվի՝ յուրաքանչյուր կառույցի առանձնահատկությունը հաշվի առնելով եւ առավելագույնս պրոֆեսիոնալ ձեւաչափով»,- ասել է նա:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ աշխատանքային ընթացիկ խնդիրներ, որոնք վերաբերել են կազմակերպությունների խաղացանկային եւ տոմսային քաղաքականությանը, մարզային համագործակցությանը, կապիտալ վերանորոգումներին, ինչի վերաբերյալ ընդգծվել է նախահաշիվները ժամանակին ներկայացնելու եւ հետագա խնդիրներից խուսափելու անհրաժեշտությունը:

ԼՈՒՐԵՐ

ԱՆՈՒՆԸ ՀԱՆԵԼ ԵՆ

ArmLur.am-ը նկատել է, որ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն վերանվանվել է Առողջապահության նախարարության «Դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ:

ArmLur.am-ի հետ զրույցում «Առողջության իրավունք» ՀԿ-ի տնօրեն Անուշ Պողոսյանը մեզ հետ զրույցում ասաց.

«Ես դրան անդրադարձել էի մեկ տարի առաջ, Առողջապահության նախարարը կառավարության որոշումով փոխել էր կանոնադրությունը եւ Էմիլ Գաբրիելյանի անունը դեղերի փորձագիտական կենտրոնի վերանվանման եղանակով հանել է, իսկ մենք գիտենք, որ այդ կառույցը հիմնադրել էր ինքը, նա ակադեմիկոս էր, Հայաստանի Հանրապետությունում դեղերի փորձագիտության հիմնադիրն է: Ինքը ՀՀ առողջապահության մեջ ամենակարեւոր մարդկանից մեկն է եղել, որը հիմնել է դեղերի փորձագիտական կենտրոնը եւ ընդհանրապես ամբիոնը. իմ համար շատ ցավալի էր, որ մտա տեսա՝ բոլոր տեղերից անունը հանել են»:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ՝ ԱՄՆ

Հայաստանից ապրիլի 30-ից մայիսի 4-ը ԱԺ մեծ պատվիրակություն կգործուղվի Վաշինգտոն:

Պատվիրակության կազմում կլինեն «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը, ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ծովինար Վարդանյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը, ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տարոն Մարգարյանը եւ «Հայաստան» խմբակցությունից Աշոտ Սիմոնյանը:

Պատգամավորների գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը, կկատարվի պետբյուջեի հաշվին:

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՓՈԽՆԱԽԱՐԱՐ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի 2024 թվականի ապրիլի 1-ի N 290-Ա որոշմամբ Տաթեւիկ Սարգսյանը նշանակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով՝ Տաթեւիկ Սարգսյանին նշանակել էկոնոմիկայի նախարարի տեղակալ»,-ասվում է հրամանագրում: Տաթեւիկ Սարգսյանը ծնվել է 1985թ.-ին Արագածոտնի մարզ, գ. Արագածավանում: Նա 2022-2024թթ. զբաղեցրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության անասնաբուծության վարչություն, գյուղատնտեսական կենդանիների բուծման բաժնի պետի պաշտոնը, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, «Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի եւ կերակրման հետազոտական կենտրոնի» գիտաշխատող է, 2023թ.-ից՝ «ՀՀ Տոհմային ոչխարաբուծների եւ այծաբուծների ասոցիացիա», կառավարման խորհրդի անդամ:

Լուրերը՝ ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԵՐԿԱԹԵ ՇԵՐԵՓ»-Ի ՁԱՏԱԳՈՎԸ

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՏԳԱՄԸ

Մկrtիչ Խրիմյանը, որը դիսի դառնար Հայ առաքելական եկեղեցու 25-րդ կաթողիկոսը, մեծ ազդեցություն է ունեցել հայ երիտասարդության ազգային տեսլականների ձեւավորման, հայրենիքի հանդեպ պատասխանատվության առաջացման գործում:

1820 թվականին Վանում ծնված Մկրտիչը 1862 թվականին որոշում է իր ներդրումն ունենալ հայության կյանքում եւ ավելի լավ ճանաչել Տարոն գավառի բնակչությանը: Նա սկսում է շրջել գյուղերով՝ տեսնելով բնակչության ծանր պայմանները, մասնակցելով նրանց ուրախություններին ու դառնություններին, հաճախ զրուցում գյուղացիների հետ իրենց հուզող հարցերի շուրջ:

Խրիմյանը հսկայածավալ աշխատանք է տանում քուրդ բեկերի հետ՝ նրանց համոզելով թողնել քոչվորական կյանքն ու անցնել նստակյաց կյանքի եւ զբաղվել հողագործությամբ: Այսպիսով նա նպատակ ուներ տարածքում թափառող քրդերին ծառայեցնել Տարոն գավառի բարեբերությանը՝ փոխարենը խոստանալով դպրոցներ հիմնել քուրդ մանուկների համար եւ հայ ուսուցիչներ տրամադրել, որպեսզի քուրդ երեխաները կրթություն ստանան:

Ծանր տնտեսական ու սոցիալական պայմանները երիտասարդներին ստիպում են մեկնել Կոստանդնուպոլիս՝ աշխատելու, ինչի հետեւանքով ընտանիքները սկսում են բաժան-բաժան լինել: Նրանց ընտանիքներին ու հայ հողին մոտ պահելու համար Խրիմյանը սկսում է երիտասարդներին համոզել, որ երկրագործությամբ ու անասնապահությամբ զբաղվեն:

Տարիների ընթացքում նա այնքան շատ բան է անում հայ գյուղացիների համար, որ նրան սկսում են «հայրիկ» կանչել. հենց այստեղ էլ ապագա կաթողիկոսին սկսում են դիմել Խրիմյան Հայրիկ:

Նա Մշո առաքելոց վանքում տպարան է հիմնում, խմբագրում «Արծվիկ Տարոնի» թերթը, որի միջոցով սթափեցնում է հայությանն ու թուրքական լուծը թոթափելու ալիք բարձրացնում:

Իր ճանապարհորդություններից, հատկապես՝ Բեռլինի վեհաժողովից հետո Եվրոպա այցից հիասթափված Խրիմյան Հայրիկը նշում է, որ բոլորը քաղաքական մեծ կաթսայից «երկաթե շերեփներով» իրենց բաժինն են վերցնում, իսկ հայերը կռիվ են տալիս թղթյա շերեփով:

Իր գործունեության ընթացքում Խրիմյան Հայրիկը մշտապես եղել է Օսմանյան կայսրության ուշադրության եւ հսկողության ներքո, հատկապես՝ կաթողիկոս ձեռնադրվելուց հետո: Որպես կաթողիկոս եւ ուստի հայության առաջնորդ այդ ժամանակներում՝ նա իր գործունեությամբ նոր լիցք ու հնչեղություն տվեց հայության ազատ ապրելու գաղափարին, ինչը զգալիորեն նպաստեց Հայաստանի ապագա անկախացմանը:

Հետաքրքիր է այն փաստը, որ Խրիմյան Հայրիկը Ամենայն հայոց կաթողիկոս ձեռնադրվելիս արդեն մեկ անգամ ամուսնացել եւ դուստր էր ունեցել: Նա միայն կնոջ մահից հետո է կուսակրոնության ուխտն ընդունել:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Նոր-Նորք, Ջուղայի փողոց, 7 շենք, 36 հասցեում գտնվող 49,9 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22870000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 22.04.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 22.05.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹԱՆԿ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը նախկին ԽՍՀՄ երկրների ամենաթանկ ֆուտբոլիստների հնգյակում է:

Transfermarkt-ի հրապարակած ցուցակում Հայաստանի ազգային թիմի անդամ Էդուարդ Սպերցյանը 4-րդն է: Նրա տրանսֆերի գինը կազմում է 18 մլն եվրո: Առաջին տեղում Վրաստանի ֆուտբոլի ազգային թիմի եւ «Նապոլի»-ի հարձակվող Խվիչա Կվարացխելիան է (80 մլն եվրո): Լավագույն հնգյակում են նաեւ Ուկրաինայի եւ Լոնդոնի «Արսենալ»-ի ներկայացուցիչ Ալեքսանդր Զինչենկոն (42 մլն եվրո) ու Ռուսաստանի հավաքականի եւ ֆրանսիական «Մոնակո»-ի կիսապաշտպան Ալեքսանդր Գոլովինը (30 մլն եվրո):

ՄԵԿՆԵԼ ԵՆ ԽՈՐՎԱԹԻԱ

Հայաստանի բռնցքամարտի երիտասարդական ընտրանին մեկնել է Խորվաթիա՝ Եվրոպայի առաջնությանը:

Տղաների պայքարում Վազգեն Բադալյանի գլխավորությամբ հանդես կգան 48 կգ Լեւոն Վարդանյանը, 51 կգ Դավիթ Սաֆարյանը, 54 կգ Արթուր Ավետիքյանը, 57 կգ Էրիկ Առստամյանը, 60 կգ Անդրանիկ Մարտիրոսյանը, 63.5 կգ Ռաֆայել Ներսիսյանը, 67 կգ Արգիշտի Հակոբյանը, 71 կգ Մարատ Միքայելյանը, 75կգ Ալբերտ Հարությունյանը, 80 կգ Արմեն Պողոսյանը, 86 կգ Նորայր Հակոբյանը, 92 կգ Դավիթ Սիմոնյանը, +92 կգ Միսակ Ստեփանյանը: Աղջիկների պայքարում Խաչիկ Խաչատրյանի գլխավորությամբ ռինգ դուրս կգան 48 կգ Հեղինե Պետրոսյանը, 54 կգ Լյուսի Ավետիսյանը, 60 կգ Լիլիթ Ասատրյանը: Եվրոպայի երիտասարդների առաջնությունը կեզրափակվի ապրիլի 15-ին:

ԸՆԴԳՐԿՎԵԼ Է ԹԻՄՈՒՄ

Ռուսաստանի ֆուտբոլի ազգային թիմի անդամ, հայկական արմատներ ունեցող Արսեն Զախարյանն ընդգրկվել է Լա Լիգայի տուրի խորհրդանշական թիմի կազմում:

«Ռեալ Սոսյեդադ»-ի կիսապաշտպան Արսեն Զախարյանն այն 11 ֆուտբոլիստների թվում է, որոնք ընդգրկվել են Իսպանիայի ֆուտբոլի առաջնության՝ Լա Լիգայի 30-րդ տուրի խորհրդանշական թիմի կազմում:

Այս տուրում Զախարյանը դարձել էր գոլային փոխանցման հեղինակ «Ալավես»-«Ռեալ Սոսյեդադ» խաղում:

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑ ԵՎ ՀԱՂԹԵՑ

Սաուդյան Արաբիայի առաջնության 25-րդ տուրում «Ալ Ֆատեհը» հյուրընկալվեց «Ալ Վեհդային» եւ հաղթեց 3:2 հաշվով: Հյուրերի կազմում երեք գոլային փոխանցում կատարեց Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Լուկաս Սելարայանը:

«Ալ Ֆատեհից» դուբլի հեղինակ դարձավ իսպանացի հարձակվող Կրիստիան Տելյոն: Աչքի ընկավ նաեւ սաուդցի հարձակվող Սաադ Ալ Շարֆան:

«Ալ Ֆատեհը» 34 միավորով 8-րդն է:

●Ապրիլի 16-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Մեծապատիվ մուրացկաններ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որոնք են խնամքի տրամադրման տեսակները: Ո՞վ իրավունք ունի օգտվելու խնամքի ծառայություններից:

Ստելլա Մանուչարյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Մանուչարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ խնամքը տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր կամ հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններում եւ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում տրամադրվում է ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին, որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե բանկը հաճախորդի հաշվեհամարին գումարը երկու անգամ է փոխանցում, ապա պարտավո՞ր է արդյոք հաճախորդը վերադարձնել այդ գումարը:

Անի Կիրակոսյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, հաճախորդը պարտավոր է այդ գումարը հետ վերադարձնել, քանի որ անձը, ով առանց օրենքի, այլ իրավական ակտերի կամ գործարքի սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը)՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի 1-ին կետ):

Այս կանոնը կիրառվում է՝ անկախ այն բանից՝ անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետեւանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բանկն իրավունք ունի նաեւ առանց հաճախորդի կարգադրության հաշվից գումար դուրս գրել դատարանի վճռով սահմանված դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Իտալիայի առաջնության 30-րդ տուրի «Ինտեր»-«Էմպոլի» խաղից հետո մարզադաշտից հեռացած վերջին ֆուտբոլիստը եղել է «Ինտեր»-ի կիսապաշտպան, Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը:

Հանդիպման ավարտից հետո նա մոտեցել է տրիբունաներից մեկում նստած երկրպագուին, ում ձեռքին եղել է Հայաստանի դրոշը: Նա հանել է մարզաշապիկն ու փոխանցել երկրպագուին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 3 - 7 +14 + 18
Կոտայքի լեռներ	- 3 - 6 +14 + 17
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 +21 + 23
Գեղարքունիք	- 3 - 6 +13 + 16
Լոռի	- 1 + 3 +17 + 21
Տավուշ	- 1 + 2 +18 + 22
Արագածոտնի լեռներ	0 + 3 +14 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 +21 + 24

Արարատ	+ 2 + 5 +24 + 26
Արմավիր	+ 1 + 4 +15 + 17
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 +21 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4 +24 + 26
Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 +24 + 26
Սյունիքի նախալեռներ	- 1 + 3 +23 + 25
ԼՂՀ	- 1 + 3 +22 + 24
Երեւան	+ 6 + 8 + 18 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*